

**Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՇՈՂԱԿԱԹ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ**

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 օգոստոսի 2004 թ.)

«Նսնդա յոյժ դուարդ լուսոյ, մայր սուրբ կաթողիկէ, զարդարեալ պննեա հարսն պանծալի, երկնանման լուսանման խորան, զի Օծեալն Աստուած՝ Էնն ի յէէն անծախապէս ի թեզ միշտ պարարագի՝ Նոր ի հաշտութիւն, մեզ ի քառութիւն, բաշխէ՛ զմարմինն եւ զարիւն Իւր սուրբ փնօրէնութեանն»:

(Միմեոն Երևանցի)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Ուրախակից եւ խնդակից եղիր լուս դուարդ, մայր սուրբ կաթողիկէ, սրբություն սրբոց Էջմիածին՝ զարդարված թանկագին քարերով, պննվիր պանծալի հարս եւ երկնանման լուսանման խորան, որովհետքն թո հիմնարկությունից մինչև այսօր երբեք չզաղարեց թո մեջ պարարագվել եւ միշտ անծախապէս բաշխվել Բանն Օծյալ՝ Քրիստոս Աստուած, որպէսզի միշտ Նոր Աստուծո ինք պապահովվի մեր հաշտությունը՝ մեր իսկ մեղքերի թավության եւ անարար փնօրնության իրագործումով:

Միբելիներ, այսօր մեր նախնայց օրինակով պանծացնում ենք ժամանակներ առաջ հենց այս վայրում Տիրոջ լուսափառ շողի կաթման հայոց հոգու ծնող Մայր Աթոռ Սրբություն Սրբոց Էջմիածնի փոնը: Այս երկրորդ փոնն է հրաշագեղ Սրբություն Սրբոցի: Նախ, Տիրոջ հրաշափառ հարությունից հետո վաթսունհինգերորդ օրը փոնախմբեցինք այս փնօրունահասարար Սուրբ Կաթողիկէի կառուցման եւ նավակարայց փոնը եւ այսօր՝ Աստուածամոր վերափոխման նավակարիքին, ի մի խմբված հիշարակում ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ երկարամյա փորձության բովում բազմաբեսակ չարչարանքներով մաթրվելով եւ ելնելով Նայոց աշխարհում երկրորդ անգամ Փրկչի աստուածային լուսը փարածելու ընթացքի մի խորախորհուրդ օրվա հիշարակը, ըստ որի մեր հավապքի հայրը, փնսնելով Աստուծո Միածին Որդուն, ով իջնելով բախեց սանդարամբարը եւ ցույց փվեց այն վայրը, ուր քրիստոնեական առաջին փաճարը պէտք է կառուցվեր, եւ մանավանդ այն փնդն, ուր քահանայապետության աթոռը պէտք է հասարարվեր:

Միբելիներ, այսօր կցանկանայի, որ խորհիներ այս փնսիլքի խորհրդի մասին, թե հայրնված ճշմարտությունն ինչ է արդյոք մեզ ուսուցանում: Աստուծո շողի կաթման հայրությունը Քրիստոսի համարածումից հետո եղավ այն ժողովրդին, որը Պնարոսի անասասնությանը իր խոսքն իրականացրեց՝ հավապքի անխախտություն ցուցաբերելով անգամ

չդրեսած նույն Միաձին Փրկչին: Նա Աբրահամի նոր որդիներ էր հաստատում՝ օրհնելով և դարձյալ սրբազործելով այս եղենային և փապանակիր երկիրը: Ընտրեց և հայկազյան կորսված զավակներին ի մի խմբեց Աստուծո սուրբ աղոթավայրի այս քաղցրաբույրում, որն Իր իսկ իջմամբ հիմնեց և աստվածային ամենիմաստ ճարտարապետյալ յույսով ձևակերպեց և հաստատեց:

Աստվածային շնորհաց ճառագայթումով երկինքն ու երկիրը հաշտվելով միավորվեցին, և աստվածությունը մտրեցավ միշտ որոնումների մեջ եղող, կյանքի իմաստությունը փրկարող հային: Մտրեցավ, որպեսզի ցույց տա այն ճանապարհը, որը դեռևս երկրի վրա զգալի կղարձներ երկնքի արթաությունը հարատևության, աննյութականի մեջ և բարության ճանապարհով, սիրո հորդումով, որով և աստվածայինի արտահայտությամբ՝ մենք պետք է վեր ելնեինք առ Աստված Իր խոնարհությունից հետո առ ազգս մարդկան: Ի վերջո, քրիստոսային ոսկեշող մուրճով հայտնությունը նոր եղենում նոր Իսրայելի ժողովրդին նորացած մի հոգեզատուստ էր:

Աստուծո հոգու շնորհառատալ այցելությունն այս փոքր ածուին Քրիստոսով նոր սկիզբ դրեց, և իր վերահիմաստավորված աստվածային երջանկությամբ ապրելու նշույլ որդեգրեց հայ մարդը:

Քրիստոսաբես առաքյալները եկան հայաստան՝ Աստուծոն թարգմանելու և ճանաչելի դարձնելու մեր ժողովրդին, սակայն Սուրբ Էջմիածնի հիմնադրությամբ ժողովուրդը միավորվեց, և «եկեղեցիս մի անձն եղեմ»: Ահավասիկ որքան մեծ և խորն է սրբություն սրբոց Էջմիածնի խորհուրդը հայի համար թե՛ հայրենիքի սահմաններում և թե՛ նրա սահմաններից դուրս կարոտած սրտով փարացրվյալ հայոց հոգիներում: Մակայն այսօր ի՞նչ եղավ արդյոք, ի՞նչ եղավ այսօր, մինչև ո՞ր նվազեց հայի հավատքն ու նվիրումը Էջմիածնի և հայ Եկեղեցու հանդեպ, ո՞ր կորան բազմախոս պարամության էջերը: Մենք՝ հայերս, մեր հին Եկեղեցին, մեր հին հավատքը ո՞ր կորան, արդյոք ի՞նչ եղավ, փկարացա՞վ հայի հավատքը, թուլացա՞վ հայի նվիրումը. ո՞չ երբեք:

Ես անձնապես հավատք եմ փածում, որ յուրաքանչյուրիս անդրադարձումով մեր անձերին և դիմացինին մեր օգտակարությամբ կարող ենք կենդանացնել ամենայն ինչ: Մեզ, սիրելիք, նոր փոսիք պետք չէ, մեզ նոր ճշմարտության հայտնություն պետք չէ, մեզ պետք է հզոր հայակերպ փորձառությամբ սիրելու կարողությունը վերարթնացնել մեր անձերում հզոր Եկեղեցու և գորավոր ազգի վերածնության գաղափարի նոր սկիզբ դնելով:

Քրիստոսի էջքի այս խորախորհուրդ փոսին ձեր ուշադրությունը ցանկանում եմ ուղղել երեք կարևոր կետերի վրա:

Առաջին՝ Սուրբ Էջմիածինը մայրն է ամենայն եկեղեցյացս մերոց և մոր սրտով անընդմեջ և անդադար բարեխոս է մեզ համար՝ «ի հաշտութիւն ընդ Աստուծոյ եւ ի քաւութիւն մեղաց մերոց»:

Երկրորդ՝ Սուրբ Էջմիածինը նորացած Նոյյան փապանն է, որ աշխարհային փարաբնույթ ակնկոծություններից մեզ յուրաքանչյուրիս ի մի խմբելով իր թևերի և հովանու ներքո՝ դեպի փրկության նավահանգիստ է առաջնորդում մեզ երկնային մանանայի բաշխումով այս սուրբ սեղանից, ուր Քրիստոս Ինքն է բազմած և կոչ է անում յուրաքանչյուրիս. «Եկայք առ Իս» (հմմտ. Մատթ. ԺԱ 29):

Երրորդ՝ Սուրբ Էջմիածնով վերահասարակաց Հայրապետական Մայր Աթոռն իր Հայրապետով, ում հաղթական գավազանը միշտ առաջնորդող է ճշմարտության շավիղներով «ի փրկութիւն անձանց մերոց»:

Մեր աղոթքն է և մեր բարեմաղթանքը, որ այս սրբություն սրբոցի երկրորդ հրաշարեսիլ պոնին միապեղ աղոթենք առ Աստված, որպեսզի Տերը անպակաս անի Իր շնորհներն Էջմիածնի միջոցով ազգիս յուրաքանչյուր գավակի, մշտապես հաղթող և զորացած պահի Հայոց Հայրապետությունն իր Հայրապետով և Հայրապետի հաղթանակած գավազանով և ողորմություն անի յուրաքանչյուրիս, որ այսօր հավաքվել ենք այս Սուրբ Պատարագին, որպեսզի միջնորդենք և վերակենդանացնենք Լուսավորչի փեսիլքը մեր կյանքում, կենդանություն դարձնենք և, Տիրոջ շնորհների հորդումով առավել զորացած, առավել կենդանացած և իմաստավորված, քայլենք Նրա ճանապարհով, որպեսզի արժանանանք Տիրոջ շնորհքին, սիրույն և խաղաղությանը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: